

Արցախին Հարցին Երկու Լուծումներ

«Նիւ Եորք Թայմզ»ի թղթակից Պիլ Քէյլըր Պաֆուէն ետք այցելած է Արցախ, ուր տեսակցած է Կառավարման Ցատուկ Կոմիտէի նախագահ Արֆատի Վոլսֆիի հետ: Իր շահեկան գրութեան մէջ, որ լոյս տեսաւ թերթին Երեւանի, 5 Սեպտեմբերի համարին մէջ, թղթակիցը կ'արտայայտէ Վոլսֆիի - եւ Մոսկուայի - տեսակէտները Արցախի հարցին լուծման կարելի ձեւերուն մասին:

Վոլսֆի, ընդունելէ ետք թէ կառավարման ներկայ յատուկ դրութիւնը չէ յաջողած, ըսած է թէ իր Կոմիտէն պէտք է նախ վերականգնէ տեղական ընտրեալ պատասխանատուներու վարչական շատ մը իշխանութիւնները: Ապա, Արցախի ապագայ գոյավիճակի լուծումներէն մէկը նկատած է ստեղծումը տեղական երկու խորհրդարաններու, մէկը հայերէրադկացած, միւսը ատրպէյճանցիներէ, ուր հայեր եւ ազերիներ պիտի պաշտպանեն իրենց ազգային իրաւունքները:

(Շարք տեսնել 5րդ էջ)

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

(Շար. առաջին էջէն)

Այս ձեռով Ատրպէյճանի հետ բոլոր կարգի կապերը պիտի խզուին, առանց որ Մարզը - գոնէ առայժմ - միանայ Հայաստանի: Սակայն այս լուծումը դժուարութեան պիտի հանդիպի քանի Ատրպէյճան պիտի մոլեգնէր, եւ «նոր անելի մը պիտի առաջնորդէր, սակայն ան մեզի դադար մը պիտի պարգեւէր: Գոնէ պատերազմ պիտի չպատահէր»:

Ատրպէյճանցիները հանդարտեցնելու համար կը ֆննարկուի նաև տարբեր լուծում մը - Շուշին, Արցախի նախկին մայրաքաղաքը եւ գոհարը իր շրջակայքով եւ այլ մասերով կտրել եւ կցել Ատրպէյճանին, եւ թերեւս կարգ մը հայկական հողամասեր աւելցնել Մարզին հիւսիսը ու ապա Արցախին պարգեւել անկախութիւն:

Վոլսֆի ըսած է, թէ «Ազերի ամբողջ մտաւորականութիւնը եւ ունեւոր դասակարգը ամառանոցներ ունին Շուշիի մէջ, եւ անոնք չեն կրնար լքել այդ բոլորը: Անոնք Շուշին կը նկատեն որպէս իրենց մարգարիտը: Հայերը, սակայն, կ'ըսեն թէ իրենց նախնիներուն գերեզմանները հոն կը գրտնուին: Այս պատճառով, այժմ (հողի) փոխանակութեան ընտրութեան հարց չկայ, քանի որ անոնք (հայերը) գերեզմաններու մասին կը մտածեն: Թերեւս, եթէ անոնք ուզեն մտածել կենդանութեան մասին, կրնանք արդիւնք կը ձեռք ձգել»: